

## Դիմում Հայաստանի Հանրապետության նախագահին

Իմ ուղերձը Ձեզ պայմանավորված է մեր երկրում 2016 թվականի հուլիսի 17-ից սկսած իրադարձություններով: Հայաստանում շուրջ 25 տարի ոչ մի կառավարություն ի գորու չեղավ ստեղծել կենսագործունեության ապահովման այնպիսի պայմաններ բնակչության ճնշող մեծամասնության համար, որոնք բարձր կլինեին նրա գոյատևման սահմաններից:

Ամենին կարիք չկա օրինակներ բերել վերոնշյալն ապացուցելու համար:

Ստեղծված իրավիճակի անելանելիությունը և հուսահատությունը երկրի բնակչության 85 տոկոսի համար հաստատվում են այնպիսի ժողովրդագրական ցուցանիշներով, ինչպիսիք են ծնելիության և մահացածության մակարդակը, հասարակության «ծերացման» տեմպերը, մշտապես աճող արտագաղթի ծավալները և այլն:

Սակայն, մեր ժողովրդի ողբերգությունը նրանում է, որ ստեղծված իրավիճակը հասարակության մեջ ծնունդ է տալիս ծայրահեղ արմատականության:

Կառավարման բոլոր մակարդակներում կեղծում են՝ հասարակության մեջ տեղի ունեցող երևույթները ներկայացնելով որպես ժամանակավոր բնույթ ունեցող, անցումային:

Պաշտոնական կոչերը՝ կառուցելու անկախ, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն, բնակչության ճնշող մեծամասնության կողմից ընդունվում են որպես մարդու արժանապատվության ծաղր, քանի որ մարդիկ մշտապես տեսնում և զգում են դրանց կեղծությունը առօրյա կյանքում:

Ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, երբ երկրի հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային իշխող վերնախավի ներկայացուցիչների բարոյաթիկական որակները խորթ են դարձել լայն զանգվածների նպատակների և գաղափարների համար:

Որքան էլ ցավալի է, սակայն պետք է փաստել, որ մեր բնակչության 15 տոկոսը կազմող հայրենական պետական և հասարակական-քաղաքական «վերնախավը», իր հավատարիմ ծառաների հետ միասին, շատ ընչաքաղց է ու անկուշտ հարստանալու իր նկրտումներում, և ես կարծում եմ, որ Դուք չեք կարող շտկել իրավիճակը միայն երկրի ներքին և արտաքին քաղաքականությամբ զբաղվող պաշտոնյաների տեղափոխությամբ:

Երկրին անհրաժեշտ է աշխարհայացքի որակական նոր պարադիգմա, որը կնպաստի հասարակության զարգացմանը:

Ներկայիս իշխող վերնախավի համար գործողությունների բնույթը արդարացնող հոգեբանական դիրքորոշումը, այսինքն՝ «ամեն ինչ ինձ համար» բոլոր հնարավոր մեթոդներով (հատկապես, անձնական օրինակով), արմատավորվում է մեր հասարակության մեջ, մերժելով մեր բնակչության մեծամասնության համար պատմականորեն ձևավորված հոգևոր-մշակութային արժեքները և նպատակները, մեզ վերածելով սուբյեկտների հանրության և առաջնորդվելով՝ «բոլորի պատերազմը բոլորի դեմ» գաղափարախոսությամբ:

Լինելով հնագույն քաղաքակրթության ժառանգներ (հաճախ սիրում ենք խոսել դրա մասին), մենք չկարողացանք անկախության տարիներին իրականացնել մի այնպիսի «սոցիալական պայմանագիր», որը կնպաստեր վստահության հաստատմանն ու ամրապնդմանը իշխող դասակարգի և ժողովրդի միջև:

Իշխանությունը պարտավոր է իր գաղափարախոսությամբ և օրինականությամբ միավորել հասարակությանը: Նա պետք է գործնականում ցույց տա այն իրավակարգը, որը չի կարող խախտվել հոգուտ առանձին անհատների կամ խմբերի:

Սակայն, սկսած անցյալ դարի 90-ական թվականներից, վերնախավը չուզեց և չկարողացավ ձևավորել հասարակության արժեքներն ու նպատակներն ուրվագծող գաղափարախոսություն, առնվազն միջնաժամկետ հեռանկարում, դրա փոխարեն ձևացնելով «բուռն գործունեություն»՝ լուծելով առաջացող մարտահրավերները, ընդ որում, չմոռանալով բավարարել իր մերկանտիլ շահերը:

Իշխող վերնախավը, անկախ իր կուսակցական պատկանելությունից, սահմանափակված ընտանեկան, կլանային և կորպորատիվ շահերով, իր գավառականության պատճառով չի «տեսնում» համազգային արժեքները և նպատակները, և ի գորու չէ դիմակայել ներքին ու արտաքին գաղափարական, սոցիալ-տնտեսական և քաղաքական-ռազմական մարտահրավերները:

Պարոն Նախագահ, ես ուշի-ուշով ուսումնասիրել եմ Ձեր ելույթը 2016 թ. հուլիսի 17-ին և հետո տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ պետական կառույցների և հոգևոր-մշակութային հանրության ներկայացուցիչների առջև: Այն կարելի է բնութագրել որպես «սեղանաճառ», և ոչ որպես երկրի ղեկավարի ելույթ, որը պարտավոր էր իր ժողովրդին բացատրել համապետական, միգուցե նաև տարածաշրջանային ճգնաժամի պատճառներն ու շարժառիթները:

Դուք նույնիսկ չբարեհաճեցիք Հայաստանի ժողովրդին և ամբողջ ազգին ցույց տալ, թե ինչպիսին կլինեն պետական կառավարման համակարգի գործողություններն ուղղված ճգնաժամից դուրս գալուն:

Ձեր ելույթը չդարձավ երկրի բնակչության լայն շերտերի համար այն միավորող և մոբիլիզացնող գործիքը, որը պետք է պաշտպաներ և ամրապնդեր մեր անկախությունը:

Կարծում եմ, որ Հայաստանի իշխող վերնախավը մտածելու շահ տ բան ունի. պարզապես, նման հարվածի կրկնությունը կարող է կործանարար լինել մեր Հայրենիքի համար...

Լևոն Ներսիսյան

Գործադիր տնօրեն